Ա Զ Գ Ա Ց Ի Ն

Մերու Հայաստանի 28 թիւ լրագրին մէջ Վեհափառ Կաթողիկոսի Բ․․․րդ տարեդարձի և Ս․ Աթոռոյս Ուսումնարանին հիմնարկութեան հանդիսին նկարագրութեան առթիւ՝ արևմտեան հիւսիսային անկեան հիման տակ դրուած պղնձեայ տախտակին վրայ արձանագրուածքին համար մի նամականի կողմն հաղորդուած տեղեկութեան ակամայ սխալմունքը կամիմք ուղղել։ Յիշեալ պղնձեայ տախտակին վրայ այսպէս արձանագրուած էր ։ «Ի Կայսրութեան Ռուսաց Աղեքսանդրի Նիկողայոսեան կառոյց «զՈւսումնարանս Ս․ Էջմիածնի՝ Կաթողի«կոս ամենայն Հայոց Գէորգ Գ․․ Կոստանդ«նուպոլսեցի։ 1869, մայիս, 21—Ռ․ՅԺ․Ը․ մարերի․ Թ․»։

Այս առթիւ արժան կը համարիմք ծանուցանել զայս ևս, որ Վեհափառ Կաթողիկոսը Կոստանդնուպոլսեցի լինելով, հետևաբար Պրուսացի չէ, այլ Պրուսայու վիճակաւորն էր, ուստի ոմանք կը սխալին կարծելով Պրուսացի լինել ։

Ս․

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Քաջ գիտելով, որ քաղցր է Արարատին իւր զաւակաց ուսումնական յառաջադիմութեանը ուրախառիթ համբաւներ լսել ու հրատարակել, ինձ քաղցր պարտականութիւն համարեցի Սաղեան գիւղի Ս․ Ստեփաննոսի վանուց նորաբաց Դպրոցի մասին մասնաւոր տեղեկութիւն տալ դորան, յուսալով որ չը զլանար և Դա հրատարակել նոյնը իւր պատուական թերթերու միջոցաւ յուրախութիւն սիրելի Ազգայնոց։

Յայտնի է Վեհափառ Հայրապետի բարենպատակ կամքը, ամենայն վիճակաց մէջ վանական Դպրոցներ հաստատելու և յառաջացնելու նրանք ուսումնական ասպարիզի մէջ, որքան որ նիւթական միջոցները ձեռնտու էին ։

Գերապատիւ Անդրէաս Արքեպիսկոպոսը Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ ընտրվելու օրէն՝ Նորին Վեհափառութեան ազգօգուտ կամքը կատարելը իւր սրբազան անհրաժեշտ պարտաւորութիւն համարելով, վերոյիշեալ Վանուց մէջ (թէպէտ նա զրկուած է նիւթական կարողութիւնից) բացաւ մասնաւոր վանական Դպրոց Արժանապատիւ վանահայր Մկրտչաբէկեանց Սարգիս վարդապետի վերատեսչութեան ներքոյ․ ժողովեց հայ մանկունք՝ դաստիարակելու նորանց, ուսուցիչ կարգելով Փինաջեանց Եւետիս Սարկաւագը ։

Նորին Սրբազնութիւնը ներկայ ամսոյս մէջ վիճակիս Եկեղեցեաց այցելութեան ելանելու ժամանակ յիշեալ Դպրոցի ուսանողաց հարցաքննութիւն առնելով հետևեալ առարկայից, այն է՝ Հայոց և Ռուսաց ընթերցանութեան և վայելչագրութեան, Կրօնագիտութեան, Քերականութեան և Երգեցողութեան, գտաւ նրանց մէջ աշակերտները բաւական յաջող, որչափ որ կարճ ժամանակի մէջ կարելի էր յառաջացնել․ այս՝ Արժանապատիւ Տեսչի և բարեջան ուսուցչի անխոնջ ջանասիրութեան ապացոյց էր։ Յանձնեց նորանց ուղեցոյց կառավարութեան նոյն Դպրոցի պատուական Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակուած վանական Դպրոցաց նորոգ կանոնադրութիւնը, յուսալով որ, եթէ ոչ առ այժմ, գոնէ

փոքր ժամանակից յետոյ կարողանայ Պ. Հոփման Հայրապետի շնորհիւը և Աղգայնոց հայրենասէր ձեռնտուութեամբը, նորա թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական ապրելաւիճակները վերացնելով մի յաջող և ապահով ընթացք տալ նորան վերոյիշեալ կանոնագրութեանը համեմատ։

Ընդ այսմ առաքելով նոյն Դպրոցի ուսանողաց հայրաքնութեան միջոցին առաջին աշակերտի կարգացած ճառը, կը խնդրեմ պատուական Ամենազրոյդ միջոցաւ հրատարակել 'ի լուր բոլոր Աղգայնոց իբրև նորատունկ փոքր բուրաստանիս մի մանաւոր նախախնամութիւն։

Սարկ. Բաղդասար Մ. Բաղդասարեան
ի Վանս Ս. Ստեփաննոսի
ի Սաղիան գիւղ.
ի 6 Յուլիսի 1869 ամի։

Հետևեալ նամակը մեծաւ ուրախութեամբ կը փութամք հաղորդել 'ի տեղեկութիւն մեր սիրելի Աղգայնոց։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

'Նուխոյ գաւառն՝ որ երբէմն Պարսկական բարբառով Շաքի էր կոչվում. այն սա Տաղասանի լերանց ստորոտներում բնակութիւն առած լինելով՝ Խանութեանց անհոգ ժամանակ, վաղուէր լեռնականաց (Լեզկաց) անդադար ասպատակութեան գերեվարութեան էր ենթարկվում. ուստի և տեղական հարստահարեալ խղճալի Հայ ժողովրդոց՝ կարեկցութեան արժանի, ցաւալի վիճակը՝ բարոյական և մտաւորական զարգացման մէջ շատ և շատ յետապատ էր, յորմէ և ջանալանց սառնասրտութիւն էր տիրում ժողովրդոց վրայ առ Աղգն և առ Եկեղեցին իւրեանց. որոնք մի միայն իրե՛ց յետաղայից ապրելոյ վիճակը ըստ նիւթական բարեբերելոյ էին հետամուտ։ Այս մի բաղմամարդ բարեպաշտ ժողովրդոյ անցաւոր կեցութեան և կարգի ապրիլ էր լինում՝ ոչ միայն գաւառն և անասնելի յափշտակութիւնք և հարստահարութիւնք անիրաւ լեռնականաց, այլ և երթևեկ քաղաքագիտ՝ բանագիտ և հմուտ մարդկանց սակաւ յարարկութիւնը յիրեանց ձախողակ ժամանակին։ Իսկ այժմ այն ամէն մառախուղը՝ Հոգի Կայսեր տիրապետութեամբ Ռուսիոյ՝ մերժուելով 'Նուխուոյ ժողովրդոյ երեսէն, հեշտութիւն յառաջադիմութեան, ուղիղ զարգացաց, ազատ ապրելոյ և բացարձակ յառաջ ընթանալ է բացուած. որմանից այժմ տեսնվում է, ահա և 'Նուխուոյ գաւառի մէջ՝ սակաւ սակաւ ազգասիրութեան նշան, քրիստոնէութեան և ջերմեռանդութեան ամենաբաղդոյ պատուղներ։ Վասն զի ազգին քաջածանօթ է ամէն ընթերցասիրաց՝ թէ 'Նուխի՝ որքան գաւառներու է բաժանուում, այնքան տարբեր խօսակցութեան. և գլխաւորապէս իբրև մի նշանաւոր՝ ամէն լեզուներէ որոշ, և սակաւուց ծանօթ Ռուսական ասացեալ բարբառը՝ որ և երկու կամ երեք գիւղ սովորաբար իրանց մէջ այդ լեզուն են գործածում, և ինչպէս մի սրբազան նշխար հնութեան անկորուստ պահած են մինչև ցայսօր, նոյն լեզուաւ գաստիարակելով իրանց որդիքը. և հաւատոյ ջերմեռանդութեամբ զարգացած՝ գրեթէ միշտ և հանապազ Հայաստանեայց մայրենի սուրբ Կրօնից՝ բարոյապէս նահատակ հանդիսացած կան։

Ըստ որում ասացինք թէ՝ երևում է և ազգասիրութեան նշան՝ առաւել ևս հոգևորութեան, 'Նուխուոյ գաւառի մէջ, 'Նիժ ասացեալ գիւղում Ռուսիաբարբառ ազգաւոր Գալուստ Խաչատրեն իւր հայրենի հնոց ընթացակից լինելով, ցոյց տուաւ նորերում իւր ջերմեռանդութեան գովելի գործը, կանգնելով իւր սեպհականութիւ-